

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19
վիճակագրության պետական խորհրդի նիստի

02.12.2009թ.

ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Յու.Պողոսյան, Ս.Դավթյան, Ա.Աղազարյան (*խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Գ.Մուրադյան (իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ), Ա.Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Լ. Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Գ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ):

Օրակարգի նախագծում` երեք հարց.

1. «2010 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող` Գ.Մարտիրոսովա/

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1.Հաղորդում Սենեգալի Դակար քաղաքում 16-18.11.2009թ.տեղի ունեցած «21-րդ դարաշրջանում վիճակագրության զարգացման ընկերակցության, (PARIS 21) կոնսորցիումի և Սենեգալի կառավարության կողմից կազմակերպված «Վիճակագրության զարգացում` ընկերակցության նորացում» թեմայով հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող` Ա. Սաֆյան/

2.2. Հաղորդում Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում 23-27.11.2009թ.տեղի ունեցած «2010թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման համաշխարհային ծրագիր» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող` Ս.Մնացականյան/

3. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բվեարկության արդյունքները-կողմ` 5, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Լսեցին՝

1. «2010 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող` Գ.Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Հաստատել «2010 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը» համաձայն հավելվածի:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ` 5, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Լսեցին՝

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1.Հաղորդում Սենեգալի Դակար քաղաքում 16-18.11.2009թ.տեղի ունեցած «21-րդ դարաշրջանում վիճակագրության զարգացման ընկերակցության, (PARIS 21) կոնսորցիումի և Սենեգալի կառավարության կողմից կազմակերպված «Վիճակագրության զարգացում` ընկերակցության նորացում» թեմայով հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող` Ա. Սաֆյան/

2.2. Հաղորդում Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում 23-27.11.2009թ.տեղի ունեցած «2010թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման համաշխարհային ծրագիր» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ս.Մնացականյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ